

Նօզ, անդիմանիչ ըստահակաց, եւ ուսուցիչ ուղ-
ղափառաց տեառնդ մերոյ դիտապետի երկրին
ամենայն լեհաց: Մատուցի երկրպագութիւն
բարձր բազկի եւ երկնաշու գարշապարի սրբու-
թեանդ: Հայր սուրբ՝ ծանուցուք մեծի անձնու-
թեանդ, մէք կոստանդինուպօլսի՝ Ղալաթաու
լեալ սուրբ լուսաւորիչ եկեղեցւոյ միաբան քա-
հանայքս, որ եմք հնազանդ սրբւոյ կաթողիկէ
առաքելական եկեղեցոյ հռոմայ: Նախ աւաք
երէց տէր անտօնս. տէր աստուածատուրս. տէր
յակօբս, տէր յարութիւնս, տէր մկրտիչս, տէր
գասպարս, տէր զաքարիաս, տէր արբահամս
հաւաստեաւ եւ ճշմարտիւ վկայեսցուք զաղէտ
խղճոյս այսորիկ, որ այս զըմցի առաքել քրիս-
տոնեայս՝ էր ի դուռն թաթար խանին կացեալ եւ
էր վաճառական Նորին, եւ որչափ քրիստոնեա՛
գերի տեսանէր զգինն կու տայր եւ ազատ կու
առնէր...», եւն: Եթէ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ
քահանաներն այսպիսի համարձակ վկայութիւն
կու տան իրենց կաթողիկէ հաւատքին, պէտք է
ընդունիլ՝ որ իրենց ժողովուրդը, Ղալաթիոյ եւ
Բերայի բնակիչներն, իրենցմէ տարբեր հաւատք
չունէին:

Սարգիս Պօլիս եկաւ այն միջոցին, երբ
1680էն մինչեւ 1690 տասնէ աւելի երէցներ
եւ աշխարհականներ պատրիարքական Աթոռին
վրայ ելեւէջ կը կատարէին: Գտաւ Պօլսոյ մէջ
կաթողիկէից զօրաւոր խումբ մը, պարագլուխ
եղաւ անոնց, զտեց զատեց զանոնք, զատ հասա-
րակութիւն մը կազմեց եւ կաթողիկէ եկեղեցւոյ